ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

Հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու

և դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին

ԵԴ2/1038/02/25 քաղ. Երևան
18 Փետրվարի 2025թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն.Ավետիսյանս ծանոթանալով «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

ՊԱՐԶԵՑ

Դատարանի 11.02.2025թվականի որոշմամբ վերադարձվել է «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ «ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ընկերության՝ «ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի և ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ ՓԲԸ-ի միջև կնքված թիվ N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/1-5-22470, N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/4-9, N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-5–, N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/3-6-70602, N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/16-2, -N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/32-11 պետության կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագրերը «ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի կողմից միակողմանի լուծելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու և որպես հետևանք «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու վերաբերյալ «ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի 16.01.2025թ.-ի թիվ No ՍԱ-34 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Հայցվորը վերացրել է հայցադիմումի թերությունները և այն կրկին 05.09.2023թվականին ներկայացրել դատարան:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, «ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ընկերությունից պետք է պահանջել «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ «ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի 16.01.2025թ.-ի թիվ No ՍԱ-34 որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածնով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1.«ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ «ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ընկերության՝ «ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՈՐՆ» ՓԲԸ-ի և ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ ՓԲԸ-ի միջև կնքված թիվ N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/1-5-22470, N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/4-9, N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-5–, N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/3-6-70602, N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/16-2, -N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/32-11 պետության կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագրերը «ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի կողմից միակողմանի լուծելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու և որպես հետևանք «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ «ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի 16.01.2025թ.-ի թիվ No ՍԱ-34 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ընդունել վարույթ:

2.«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ընկերությունից պահանջել դատարան ներկայացնել «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի 16.01.2025թ.-ի թիվ No ՍԱ-34 որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը «ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ընկերության կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
4.Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2025թվականի ապրիլի 01-ին:
5.Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան

Digitally signed by NAIRA AVETISYAN

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am